[1] Դուրս գրման ամսաթիվ			**Հարկային հաշիվ** (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
26	Հունիս	2019 թ.		Ա	3792389192
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
26	Հունիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ռում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	57107218 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

26/06/2019 14:45:38

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անուն, ազգանուն)

պաշտոնը ստորագրությունը (անուն, ազգանուն)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԵՏՄԱՀՈՒ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒՅԹՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10-ը հունվարի 2019թ. ք. Էջմիածին

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Վ.Բազունցս, վերանայելով թիվ 57107218 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի հունիսի 07-ին՝ ժամը 06:15-ին, ոստիկանության Վաղարշապատի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ Արմավիրի մարզի Արագած գյուղի 19-րդ փողոցի 30-րդ տանը հայտնաբերվել է Գրիգոր Նիկողոսի Գրիգորյանի /ծնված 12.07.1968/ դին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Վարդուհի Գրիգորյանը բացատրություն է տվել այն մասին, որ Գրիգոր Գրիգորյանը հանդիսանում է իր ամուսինը: Գրիգոր Գրիգորյանը մասնագիտությամբ զոդող է եղել: 2018թ. հունիսի 6-ին իրենց տանը հյուրեր են ունեցել, նստել են որոշ ժամանակ և քանի որ Գրիգոր Գրիգորյանն ալկոհոլի նկատմամբ հակում է ունեցել այդ օրը նույնպես օգտագործել են ալկոհոլ, որից հետո ժամը 22:00-ի սահմաններում հյուրերը հեռացել են և տանը մնացել են ինքը և Գրիգոր Գրիգորյանը: Հյուրերի հեռանալուց հետո իր տան աշխատանքներով է զբաղվել, իսկ Գ.Գրիգորյանը դուրս է եկել պատշգամբ և այդ ժամանակ պատշգամբի փայտյա դուռը բաց վիճակում է գտնվել: Դրանից հետո ժամը 02:00-ի սահմաններում իջել է ներքև, անջատել է լույսերը, որից հետո հետ բարձրանալու ժամանակ նկատել է, որ պատշգամբի փայտյա դուռը փակ է: Դռան փակ լինելու հանգամանքը կասկածելի թվալու համար գնացել և տան միջով դուրս է եկել պատշգամբ և նկատել, որ Գրիգոր Գրիգորյանը պատշգամբի տանիքի ներսից մետաղյա լարով կախված է: Տեսնելով դա, նա անմիջապես վերցրել է դանակը, այնուհետև դրել է աթոռը և կտրել մետաղյա շղթան և, երբ այն կտրել է ամուսինը ընկել է գետնին: Դրանից հետո անմիջապես զանգահարել է իր ամուսնու ընկեր Համլետ Շագոյանին և կանչել, որը անմիջապես եկել և տեսել է Գրիգոր Գրիգորյանին գետնին ընկած վիճակում, որից հետո նրան պատմել է եղելությունը: Գ.Գրիգորյանը գետնին ընկած վիճակում սկսել է խռռացնել, որի համար էլ իրենց թվացել է, թե ամեն ինչ նորմալ է, քնած է, քանի որ նա միշտ խռռացնելով է քնել: Այդ ժամանակ տանից բերել է անկողին և գցել Գ.Գրիգորյանի տակ, իսկ ընկերը՝ Հ.Շագոյանը մտածելով, որ ամեն ինչ նորմալ է տուն է գնացել: Դրանից հետո ժամը 05:30-ի սահմաններում մոտեցել է ամուսնուն, որպեսզի տեսնի, անցել է խմածությունը, թե ոչ, ինչպես է իրեն զգում և լսել է, որ այլևս չի խռռացնում, մտածել է, որ արդեն հանգստացել է և ցանկացել է արթնացնել և ներս տանել, ինչի համար ձայն է տվել, սակայն տեսնելով, որ ոչ մի պատասխան չկա անհանգստացել է և կրկին զանգահարել է Համլետ Շագոյանին և խնդրել կրկին գալ: Համլետ Շագոյանը եկել և մոտեցել է Գրիգոր Գրիգորյանին, որից հետո հայտնել է, որ շտապօգնության

որը արդեն գիշերը՝ ժամը 02:00-ի սահմաններում իջել է ներքև և լույսերը անջատելուց հետո, հետ բարձրանալու ժամանակ նկատել է, որ պատշգամբի դուռը, որը մինչ այդ բաց է եղել, փակ է: Դրանից հետո մտել է տուն, խոհանոցի միջով դուրս եկել դեպի պատշգամբ և նկատել, որ Գրիգոր Գրիգորյանը մետաղյա շղթայով կախված է, անմիջապես տանից աթոռ բերելուց հետո բարձրացել և դանակով կտրել է մետաղյա շղթան, որի պատճառով հայրը՝ Գրիգոր Գրիգորյանը ընկել է գետնին: Պարանը կտրելուց հետո Վարդուհի Գրիգորյանը սկզբից զանգահարել է հորեղբորը՝ Մամբրե Գրիգորյանին, սակայն հեռախոսի զանգերին չպատասխանելու պատճառով զանգահարել է Գ.Գրիգորյանի մոտ ընկեր Համլետ Շագոյանին և նրան խնդրել, որ շտապ գա իրենց պատշգամբ: Դրանից հետո Համլետը և իր մայրը՝ Մանյա Շագոյանը, եկել են իրենց պատշգամբ և նկատել, որ Գրիգոր Գրիգորյանը ընկած է գետնին, որից հետո Վարդուհի Գրիգորյանը նրանց պատմել է եղելությունը և Համլետ Շագոյանին, որ վերևը մնացած մետաղյա շղթայի փոքր հատվածը հանի, քանի որ մտածել է, երբ հայրը Գ.Գրիգորյանը արթնանա, կտեսնի պարանը և կվախենա: Նշել է, որ մայրը, երբ կտրել է մետաղյա շղթան և հայրը ընկել գետնին, սկսել է ,, խոռացնել,, որի համար էլ մտածել է, որ փրկել է նրան, գնացել է տանից դոշակ և վերմակ է բերել ու փռել է պատշգամբում, որպեսզի հայրը այնտեղ էլ քնի: Դրանից հետո Համլետ Շագոյանը և իր մայրը գնացել են, իսկ Վարդուհի Գրիգորյանը՝ մտել տուն, դուռը բաց թողնելով՝ հայրիկի ,,խոռոցի,, ձայները լսելու համար: Դրանից հետո՝ ժամը 05:30-ի սահմաններում, մայրը հայրիկի ,,խոռոցի,, ձայները չլսելու պատճառով դուրս է եկել պատշգամբ, մոտեցել Գրիգոր Գրիգորյանին և նկատել, որ այլևս չի ,,խոռացնում,, և կրկին զանգահարել է Համլետ Շագոյանին ու շտապ կանչել իրենց պատշգամբ: Դրանից հետո Հ.Շագոյանը կրկին եկել և մոտեցել է Գ.Գրիգորյանին և հավանաբար հասկանալով, որ վերջինս մահացել է, մայրիկին հայտնել, որ անմիջապես զանգահարի շտապօգնություն:

24.07.2018թ. ստացվել է նշանակված դատաբժշկական փորձաքննության թիվ 039 եզրակացությունը, համաձայն որի Գրիգոր Գրիգորյանի մահը վրա է հասել մեխանիկական շնչահեղձությունից, սեփական մարմնի ծանրության ազդեցությամբ, պարանոցի օրգանների օղով սեղմման՝ կախման հետևանքով, որն էլ գտնվում է ուղղակի պատճառական կապի մեջ մահվան հետ: Սույն հետևությունը հիմնավորվում է քաղ. Գրիգոր Գրիգորյանի դիակի դատաբժշկական փորձաքննության ընթացքում հայտնաբերված՝ պարանոցի վերին երրորդականի կենդանության ժամանակվա, միակ, ընդհատվող, հետևից՝ առաջ, վերից՝ վար ձախից՝ աջ ուղղությամբ, ատիպիկ ճմլման ակոսի, աչքերի շաղկապենիների, սրտի էպիկարդի ընդերային թոքամզերի տակ, կետավոր արյունազեղումների, ճմլման ակոսի ստորադիր փափուկ հյուսվածքներում, կրծոսկրանրակապտկաձևային մկանների ոտիկներում արյունազեղումների, թոքերի էմֆիզեմայի, բազմաթիվ մանր և խոշոր օջախային արյունազեղումների, գլխուղեղի, թոքերի այտուցի, կանգային գերարյունության առկայություններով, որոնք պատճառվել են՝ կենդանության օրոք, մահվանից որոշակի կարճ ժամանակահատված առաջ, ճմլման ակոսը և ստորադիր արյունազեղումները՝ պարանոցի շրջանում կոշտ, այդ թվում փորձաքննությանը ներկայացված օղի ներգործությամբ, մնացածը մեխանիկական շնչահեղձման փուլերի ընթացքում: Քաղ. Գրիգոր Գրիգորյանի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված մարմնական վնասվածքները՝ ճմլման

Այդ ժամանակ Վ.Գրիգորյանը խնդրել է, որպեսզի բարձրանա և հանի կտրած մետաղյա շղթայի մնացած հատվածը, որպեսզի առավոտյան, երբ Գ.Գրիգորյանը արթնանա, չտեսնի այն: Վերջինիս դռշակի վրա պառկեցնելուց հետո իր մայր Մ.Շագոյանի հետ գնացել են տուն: Դրանից հետո արդեն ժամը 05:30-ի սահմաններում կրկին զանգահարել է Վարդուհի Գրիգորյանը և խնդրել կրկին մոտենալ: Դրանից հետո արդեն միայնակ գնացել է նրանց պատշգամբ և տեսել է, որ Գրիգոր Գրիգորյանը չի խռռացնում, մոտեցել է նրան, հասկացել է, որ մահացել է, ինչի համար էլ Վարդուհի Գրիգորյանին հայտնել է, որ անմիջապես զանգահարի շտապօգնություն և դուրս է եկել այնտեղից:

Նույնաբովանդակ ցուցմունքներ է տվել նաև Համլետ Շագոյանի մայրը՝ Մանյակ Շագոյանը:

Վկա Մամբրե Նիկողոսի Գրիգորյանը ցուցմունքներ է տվել, այն մասին, որ բնակվում է Արմավիրի մարզի Արագած գյուղի 15-րդ փողոցի 9-րդ տանը կնոջ՝ Մարջիկ Գրիգորյանի հետ համատեղ: Չի աշխատում, թոշակառու է: Գրիգոր Գրիգորյանը հանդիսացել է եղբայրը, ով նույնպես բնակվում էր Արմավիրի մարզի Արագած գյուղում, որը իրենց տանից գտնվում են մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա: Եղբայրը հիմնական աշխատանք չուներ, զոդող էր: 2018 թվականի հունիսի 06-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, իր կին Մարջիկ Գրիգորյանի հետ, երբ գտնվել են հողամասում, իրեն է զանգահարել եղբայրը՝ Գրիգոր Գրիգորյանը և երեկոյան հրավիրել իրենց տուն, սակայն նրանք չեն գնացել, քանի որ հոգնած են եղել: Ժամը 18:00-ի սահմաններում վերջացրել են աշխատանքը և գնացել տուն, հաց կերել և մի քիչ նստելուց հետո պառկել ու քնել են: 2018 թվականի հունիսի 07-ին՝ առավոտյան ժամը 05:30-ի սահմաններում, իրեն է զանգահարել եղբոր՝ Գրիգոր Գրիգորյանի կին Վարդուհի Գրիգորյանը և հայտնել, որ շուտ գան, քանի որ Գրիգորը լավ չի: Դրանից հետո ինքը և կինը՝ Մարջիկ Գրիգորյանը, իրեն պատկանող ,,Վոլգա 3110,, մակնիշի ավտոմեքենայով անմիջապես գնացել են Գրիգորենց տուն: Զանգից 5 րոպե հետո հասել են այնտեղ, բարձրացել պատշգամբ և նկատել, որ Գրիգոր Գրիգորյանը պառկած է պատշգամբի հատակին՝ կողաշրջված վիճակում, դռշակի վրա, իսկ Վարդուհի Գրիգորյանն անընդհատ գնում գալիս էր նրա կողքով: Այդ ժամանակ պատշգամբում եղել են միայն 4-ով, այսինք ինքը, Մարջիկ Գրիգորյանը, Վարդուհի Գրիգորյանը և Գրիգոր Գրիգորյանը: Դրանից հետո Վարդուհի Գրիգորյանին հայտնել է, որ կեղտոտ շորերը փոխի, որպեսզի Գ.Գրիգորյանին տանեն հիվանդանոց, սակայն Վ.Գրիգորյանը նշել է, որ արդեն զանգահարել է շտապօգնություն և ուր որ է կհասնեն: Դրանից հետո Վ.Գրիգորյանը զանգահարել է նաև Գ.Գրիգորյանի քեռու տղային՝ Ալբերտին, ով իրենց տանից մի փոքր այն կողմ է բնակվում, որն էլ զանգահարելուց հետո կնոջ՝ Սուսանի հետ եկել է: Դրանից հետո եկել են շտապ շտապօգնության աշխատակիցները, մոտեցել են Գրիգոր Գրիգորյանին, ձեռք տվել նրան և հայտնել, որ նա մահացել է: Այդ ժամանակ նոր Վարդուհի Գրիգորյանը հայտնել է իրենց, որ Գ.Գրիգորյանը իրականում իրեն կախել է, իսկ մինչ այդ հայտնելը, նա մտածել է, որ Գրիգոր Գրիգորյանը սրտի պատճառով է վատ:

Վարդուհի Գրիգորյանը 02.10.2018թ. ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 128-րդ հոդվածի 3-րդ մասով, վերջինս իրեն մեղավոր չի ճանաչել կատարված հանցագործության մեջ և հրաժարվել է որևէ ցուցմունքներ տալուց:

որևէ լուրջ հիվանդությամբ չի տառապել, հոգեկան որևէ խնդիրներ չի ունեցել: Մասնագիտությամբ զոդող է եղել, բացի այդ ձեռքից ամեն տեսակի աշխատանքներ կատարելու շնորք է ունեցել: Գ.Գրիգորյանին բոլորը սիրել և հարգել են, ոչ ոքի հետ երբեք չի վիճաբանել, որևէ տեսակի խաղամոլությամբ չի տառապել, որևէ կրոնական շեղվածություն կամ անդամ չի եղել: 2017թ. իր տանը վերանորոգչական աշխատանքեր կատարելու պատճառով գյուղի խանութներում ունեցել է պարտքեր, սակայն պարտատերերից ոչ ոք երբեք նրանից գումար չի պահանջել, չի ստիպել, որ ժամանակից շուտ հետ վերադարձնի:

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև հանգուցյալի քույր Վարդուշ Գրիգորյանի ամուսին Վարդան Ղազարյանը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ սույն քրեական գործով որոշակի հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատական հոգեբանության և հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244, 246-րդ և 248-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1/ Թիվ 57107218 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և ՀՀ ԱՆ միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին, առաջնային փորձաքննության իրավունքը վերապահել հոգեբանական փորձագետներին:

2/ Փորձագետների պարզաբանմանը առաջադրել հետևյալ հարցերը.

ա. Ինչ հոգեվիճակում է գտնվել հանգուցյալ Գրիգոր Նիկողոսի Գրիգորյանը ինքնասպանությանը նախորդող ժամանակահատվածում:

բ. Ինչպիսի անձնային առանձնահատկություններ, հուզական և մոտիվացիոն ոլորտի առանձնահատկություններ է ունեցել Գ.Գրիգորյանը:

գ. Գ.Գրիգորյանը որևէ հոգեկան հիվանդությամբ կամ հոգեկան գործունեության խանգարմամբ տառապել է, թե ոչ: Եթե այո, ապա ինչպիսի և երբ:

դ. Նման արարք կատարելը կարող էր պայմանավորված լինել նրա հոգեկան վիճակով:

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՍ

3/ Փորձագետների պարզաբանմանը առաջադրել հետևյալ հարցերը.

ա. Գ.Գրիգորյանը տառապել է արդյոք որևէ հոգեկան հիվանդությամբ, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարմամբ, նրա մոտ առկա է եղել արդյոք որևէ հիվանդագին վիճակ կամ տկարամտություն, եթե այո, ապա կոնկրետ ինչ հիվանդության և արդյոք դրանք ազդել են Գ.Գրիգորյանի կողմից ինքասպանություն կատարելու վրա:

բ. Գ.Գրիգորյանին զրկել են արդյոք այդ հիվանդությունները նշված արարքը կատարելու պահին իր գործողությունների բնույթն ու նշանակությունը, դրանց վնասակարությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունից:

գ. Գ.Գրիգորյանը կարող էր գիտակցել իր հետ կատարվածի բնույթն ու նշանակությունը: